«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հուլիսի 2013 թվականի

Առկա ուսուցման բակալավրիատում գիտելիքների գնահատման բազմագործոնային կարգում փոփոխություններ կատարելու մասին

Ուսանողի գիտելիքների գնահատման բազմագործոնային մոտեցումը կրեդիտային համակարգում խիստ կարևորվում է: Ըստ այս համակարգի՝ որոշակի առարկայի գծով ուսանողի ամփոփ գնահատականը ձևավորվում է կիսամյակի ընթացքում, գնահատման մի քանի գործոնների և դրանց կշիռների հիման վրա՝ հաշվի առնելով հաճախումները և ընթացիկ ակտիվությունը, անհատական աշխատանքը և գիտելիքների ստուգման 1-ին ու 2-րդ միջանկյալ փուլերը: Ուսանողների գնահատումն իրականացվում է 100 միավորային համակարգով:

Բազմագործոնային գնահատման համակարգի գործոնները և կշիռները

	ԳՈՐԾՈՆՆԵՐ (տարբերակված գնահատումով (քննությամբ ավարտվող) անհատական աշխատանքով մոդուլների համար)	ԿՇԻՌՆԵՐ
1.	Հաճախումներ և ընթացիկ ակտիվություն	20
2.	Ուսանողի անհատական աշխատանք	12
3.	Միջանկյալ ստուգում 1-ին	34
4.	Միջանկյալ ստուգում 2-րդ	34

	ԳՈՐԾՈՆՆԵՐ (տարբերակված գնահատումով (քննությամբ ավարտվող) անհատական աշխատանքներ չպարունակող մոդուլների համար)	ԿՇԻՌՆԵՐ
1.	Հաճախումներ և ընթացիկ ակտիվություն	32
2.	Միջանկյալ ստուգում 1-ին	34
3.	Միջանկյալ ստուգում 2-րդ	34

	ԳՈՐԾՈՆՆԵՐ (ստուգարքով ավարտվող մոդուլների համար)	ԿՇԻՌՆԵՐ
1.	Հաճախումներ և ընթացիկ ակտիվություն	60
2.	Ամփոփիչ ստուգում	40

Բազմագործոնային գնահատման կշիռները, անհրաժեշտության դեպքում, ռեկտորատի կողմից ենթակա են վերանայման:

Հաճախումների ցուցանիշը ընթացիկ ակտիվության գործոնի գնահատականի վրա անդրադառնում է հետևյալ կերպ.

Հաճախումների ցուցանիշը (%)	Ընթացիկ ակտիվության առավելագույն գնահատականը		
	որպես մաս ընդհանուր հաշվարկային գնահատականի (տարբերակված գնահատումով (քննությամբ ավարտվող) անհատական աշխատանքով մոդուլների համար)	որպես մաս ընդհանուր հաշվարկային գնահատականի (տարբերակված գնահատումով (քննությամբ ավարտվող) անհատական աշխատանքներ չպարունակող մոդուլների համար)	որպես մաս ընդհանուր հաշվարկային գնահատականի (ստուգարքով ավարտվող մոդուլների համար)
90,1 - 100	20	32	60
80,1 - 90,0	18	28	54
70,1 - 80,0	15	23	46
60,1 - 70,0	12	18	36
50,1 - 60,0	8	12	24
40,0 - 50,0	4	6	12
Մինչև 40,0	0	0	0

Ուսանողների հաճախումները չհաշվառելու դեպքում դասախոսը ենթարկվում է կարգապահական տույժի:

Գիտելիքների ստուգումներն իրականացվում են՝
1) թեստային-համակարգչային,
2) թեստային-լսարանային և
3) բանավոր եղանակներով:

Բանավոր քննություններն անցկացվում են հանձնաժողովներով՝ ամփոփիչ ատեստավորման քննությունների նման: Բանավոր քննության գնահատականի բողոքարկումը կատարվում է լսարանում՝ գնահատականը հայտնելուց անմիջապես հետո:

Համահամալսարանական դասընթացներից գիտելիքների ստուգումը (գնահատումը) կազմակերպվում է թեստային (համակարգչային կամ լսարանային) եղանակով (ռեկտորատի որոշմամբ դրանք կարող են կազմակերպվել կա՛մ համակարգչային, կա՛մ լսարանային եղանակներով):

«Բարձրագույն մաթեմատիկա», «Հավանականությունների տեսություն և մաթեմատիկական վիճակագրություն», «Վիճակագրության ընդհանուր տեսություն», «Սոցիալ-տնտեսական վիճակագրություն» և «Տնտեսամաթեմատիկական մեթոդներ և մոդելներ» առարկաների քննությունները կազմակերպվում են գրավոր-բանավոր եղանակով՝ տեսական և գործնական հարցերի գրավոր պատասխանները զուգակցելով բանավոր մեկնաբանություններով:

Մասնագիտացման (5 կրեդիտանոց) դասընթացներից գիտելիքների ստուգման եղանակներն առաջարկում է ամբիոնը, որոշում է ռեկտորատը:

Քննաշրջանում վերահանձնում է կազմակերպվում այն դեպքում, երբ վերջնական հաշվարկային գնահատականի թվային արժեքը փոքր է 40-ից: Ամբողջ քննաշրջանի ընթացքում ուսանողը պահպանում է անհատական աշխատանքի ու հաճախումների և ընթացիկ ակտիվության գնահատականները: Քննաշրջանի ընթացքում անցողիկ գնահատականը 40-ն է: Դիպլոմի հավելված է փոխանցվում վերահանձնումից հետո ձևավորված վերջնական գնահատականը:

Գիտական խորհրդի նախագահ **Կ. Լ. Աթոյան**
10.07.2013 թ.